Ընկերություն՝ AMX | Armenia Securities Exchange
Պաշտոն՝ Ցուցակման ստորաբաժանման փորձնակ/ Intern in the Listing unit

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

AMX ընկերությունը փնտրում է հետաքրքրասեր, ակտիվ և նախաձեռնող անձնավորություն իր Արժեթղթերի ցուցակման բաժնում փորձառություն անցնելու և բաժնի աշխատանքներին աջակցելու համար: Փորձնակը գործուն մասնակցություն է ունենալու բորսայում արժեթղթերի ցուցակման և արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված ընթացիկ գործընթացների կազմակերպմանը, ինչպես նաև աջակցելու է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և ներդրման աշխատանքների իրականացմանը:

ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Արժեթղթերի տեղաբաշխման, ցուցակման/առևտրին թույլտվության նպատակով Բորսա ներկայացված փաստաթղթերի փորձաքննության անցկացում, բացակայող, թերի կամ ոչ լիարժեք ներկայացված տեղեկատվության հայտնաբերման և թողարկողի կողմից դրանց ներկայացման հետ կապված աշխատանքների կազմակերպում,
- Աջակցություն ցուցակման հանձնաժողովի աշխատանքների և քննարկումների կազմակերպմանը,
- Հաշվետու թողարկողների կողմից Բորսայի՝ արժեթղթերի տեղաբաշխման և ցուցակման կանոնների դրույթների պահպանման մոնիտորինգի իրականացում,
- Թողարկողների հետ հաղորդակցության գործընթացի կազմակերպում, ամենօրյա աջակցության տրամադրում,

- Հաշվետու թողարկողների և նրանց ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում և համակարգում,
- Արժեթղթերի ցուցակման և տեղաբաշխման գործընթացի հետ կապված անմիջական ղեկավարի կողմից տրված այլ առաջադրանքների իրականացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

- Բակալավրի աստիճան ֆինանսների կամ այլ հարակից ոլորտում (4-րդ կուրսի ուսանողները նույնպես կարող են դիտարկել առաջարկը),
- MS Office-ի, մասնավորապես MS Excel-ի լավ իմացություն, այլ համակարգչային ծրագրերի իմացությունը կդիտվի որպես առավելություն,
- Հայերենի գերազանց, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն,
- Նախաձեռնողական և պատասխանատու անձնավորություն,
- Նորարարական և վերլուծական մտածելակերպ,
- Գրագետ բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ,
- Դրական և թիմային գործելաոճ:

Տրամադրվող արտոնություններ՝

- Մասնագիտական զարգացման հնարավորություններ,
- Թիմբիլդինգային և կորպորատիվ միջոցառումներ,
- Հաճելի գրասենյակային միջավայր,
- Անընդհատ զարգացող և մոտիվացնող թիմ,
- Թեյ, սուրճ, ժպիտներ ☺

Դիմելու կարգը՝ Բոլոր հետաքրքրված անձինք կարող են ուղարկել իրենց ռեզյումեն (CV) հետևյալ էլ. հասցեին՝ **careers@amx.am**, նամակի վերնագրի հատվածում նշելով «**Ցուցակման ստորաբաժանման փորձնակ**»:

Վերջնաժամկետ՝ «31» Հոկտեմբեր

Ընկերության մասին՝

Հայաստանի ֆոնդային բորսան գործող միակ ֆոնդային բորսան է, որի կազմում է նաև Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան: Միասին մենք արդեն 18 տարի աջակցում ենք ներդրողներին ներգրավել կապիտալ:

Մեր նպատակն է սատարել բարենպաստ գործարար միջավայրի ստեղծմանը և գրավել հայաստանյան ու միջազգային ներդրողների՝ առաջարկելով արդյունավետ լուծումներ ու ծառայություններ, այդ թվում՝ առևտրի, քլիրինգի, վերջնահաշվարկի և կենսաթոշակային համակարգի կառավարման ոլորտում:

Գտնվելու վայրը՝ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 5-րդ հարկ,

Վեբ կայքեր՝ amx.am, cda.am,

Facebook https://www.facebook.com/AMXArmenia/,

Linkedin https://www.linkedin.com/company/amxarmeniaexchange/: